

Թեմայի վերնագիրը՝

Որոտան-Գորիս դիատոմիտաբեր ավազանի
ֆոսֆորիտային ապարները և նրանց
օգտագործման հնարավորությունները՝
որպես ֆոսֆորային պարարտանյութեր

Կազմակերպության անվանումը՝

ՀՀ ԳԱԱ «Երկրաբանական գիտությունների
ինստիտուտ» ՊՈԱԿ

Թեմայի ղեկավարը՝

Ավագյան Թոռնիկ Արսենի

Նախագծի նպատակն է երկրաբանա-որոնողական կոմպլեքս աշխատանքների և վերլուծական ուսումնասիրությունների միջոցով Հայաստանի Հանրապետության տարածքում անջատել տնտեսապես արդյունավետ և էկոլոգիական պահանջներին բավարարող ֆոսֆորիտաբեր գոտիներ, որոնց մեջ գտնվող ֆոսֆորիտաբեր ապարները իրենց ագրոքիմիական հատկություններով և պաշարներով որոշակիորեն կբավարարեն ֆոսֆորային պարարտանյութերի պահանջարկը Հայաստանում և տարածաշրջանում:

Հայաստանի տարածքում մինչ այժմ հայտնի ֆոսֆորիտաբեր գոտիներում առկա են խանգարող հանգամանքներ, որոնք հնարավորություն չեն տալիս լիարժեք կերպով օգտագործելու այդ շերտերը:

Մեր կողմից հայտնաբերված ֆոսֆորիտաբեր գոտիները, որոնք գտնվում են Որոտան-Գորիս դիատոմիտաբեր ավազանում, ունեն մի շարք առավելություններ.

- նստվածքները երիտասարդ հասակի են, հիմնականում ունեն հորիզոնական տեղադրում,
- ներփակող ապարները և ֆոսֆորիտային մարմինները ունեն բիոգեն ծագում,
- ֆոսֆորիտային ապարները հեշտ մշակվող են, ենթարկվում են հեշտ հարստացման,
- ներկայացված նմուշներում բույսերի կողմից P2O5 -ի կլանման քանակներն լիովին բավարարում են պարարտանյութ օգտագործելու պահանջներին,
- նախնական հարստացման մեթոդով ստացվել են բարձր տոկոս (19.5-33,5) պարունակող P2O5 պարարտանյութեր,
- պաշարների ծավալը բավականաչափ են պարարտանյութերի արտադրություն ծավալելու համար:

Նախագծի հիմնական նպատակի իրագործման համար անհրաժեշտ է կատարել դաշտային աշխատանքներ, վերլուծական և ագրոքիմիական ուսումնասիրություններ, ինչպես նաև փորձարարական աշխատանքներ՝ հարստացման ամենաարդյունավետ տեխնոլոգիան ստանալու նպատակով տարբեր ցանքատարածքներում ստացված P2O5 կոնցենտրատի ազդեցությունը բույսերի աճի, բերքատվության և քիմիական կազմի վրա ստուգելու ուղղությամբ: